ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄԱՔ-ՔՏՍՀ-ԳՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի նիստի

ք. Արթիկ 06.11.2018թ. ժամը 14 :00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ.Ֆերակյան

Հանձնաժողովի անդամներ ՝Կ. Պապիկյան, , Ա. Սիմոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Աղաքարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝Տ. Ֆերակյան/հանձնաժողովի նախագահի/)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված Եզրակացության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատում:
5. Անգործության ժամկետի սահմանում:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված Եզրակացության գնահատում:

(զեկուցող՝ Տ. Ֆերակյան/հանձնաժողովի նախագահի/)

Ընդունել ի գիտություն.

05.11.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարված հարցման եզրակացությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ըստ ստացված Եզրակացության առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի հարկային պարտավորություններ: (ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացությունը կցվում է):

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում (Տ. Ֆերակյան/հանձնաժողովի նախագահի/)

Առաջին տեղ զբաղեցրած մասնակի <<Ույուտ Սենթր>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կից գրությամբ՝ Հավելված 6 և Հավելված 6.1: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է գնման հայտով սահմանված տեխնիկական բնութագրին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Քննարկելով վերը նշված հանգամանքները Գնահատող հանձնաժողովի անդամները կայացրեցի որոշում.

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՈՒյուտ Մենթր» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Կազմել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:
3. Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում « 5 » օրացուցային օր է: Անգործության ժամկետը չի կիրառվում քանի որ հայտ ներկայացրել է մեկ մասնակից:

4.Կազմել պայմանագրի նախագիծ ուղարկել ընտրված մասնակցին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Տ. Ֆերակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Կ. Պապիկյան

_____ Ա. Սիմոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Աղաքարյան